




TRAIN MAINTENANCE AN ARMENIAN WEEKLY.

ՀԱՍՏԷ AMERICAN HAI PUBLISHING CO 209 E. 23d St., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter

Subscription \$1.50 a Year.



Հայրենեաց

ՇԱՐԱԲԱԹԵՐԻԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՐԻԹԻՒՆ

Հանգ. Ամեն. Գրիգորի Արք եպիս. Ալեքսանդրական (Կենսագրական ակնարկ). - Ի՞նչ Միջոց-ժամանակ. - Նամակ Պարսկաստանին (Թարգմ.) - Նամակ Աւստրալիային. - Ստորագած Տրպեր (Նամակ Լուսինյանի). - Նամակ Պոստոնին. - Աղ-գային Գրոնիկ. - Բայազետական. - Բանասիրական (Հասարակ Բնութագրական Ազգացուցիչներ):

ՀԱՆԳ. ԱՄԵՆ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍ. ԱԼԷՍՔԱՆԸՆ. (Կենսագրական Ակնարկ)

Կենսագրական կան որոնց գերեզմանը անհնգով կը հասնենք, կենսագրական կան որոնց շիրիմը պտուղ մը արցունքով կը ցողենք, իսկ կենսագրական ալ կան որոնք իրենց ետևէն կը տանին ողբ ու սուգ: Եւ այդպիսի կենսագրական ժողովուրդի շահերուն անկեղծ նուիրուած գործիչներն են, որոնք գերեզմանէն աստիճան իրենց անցնալը իր օգտակար օրինակ մը կը թողուն, «Եկէ՛ք, կըսեն, այն գառն ու փշոտ ճանապարհէն, որ կ'առաջնորդէ զէպի փրկութիւն», ու աս փրկութիւնը այս աշխարհի անձնուրաց գործունէութեան մէջն է:

Ամեն. Ալեքսանդրական, որպէս բարձր հոգևորական, անկեղծ ու անձնուրաց Հովիւ, Հասարակական Գործիչ, իր մանուկ Հասակէն մինչև սեպագատ գերեզմանը՝ օրինակելի կենսագր մը թողուց, որ ալ ազգային պատմութեան էջերուն մէջ կանցնի:

Տանք իւր կենսագրի ուրուագիծը: Ամեն. Գրիգորի Սրբազան ծնած էր 1840 յունիս 30ին Սամաթիա քաղաքի մէջ: Հասարակ արհեստագործի մը, դարձելով մը սրբի էր, «Գառն Ալեքսանդր» (կողպարար) կը կոչուէր իւր հայրը, ուրկէ մնացած է իր Ալեքսանդրական մականունը: Նախնական կրթութիւնը ստացեր է նախ Կ. Պոլսոյ Պատմութեան դպրոցի մէջ եւ յետոյ Սիւրբաբայի Ս. Խաչ վարժարան, ուրկէ անցած է ձեմարան, ուր աշակերտած է Տէր Յովհաննէս քահանայ Հիւնքէրպէյնեանի և ապա 1856-57 թրււին Վանանդեցի Գրիգոր վարժարանին:

ձեմարան աւարտելէն զկէի, Սրբազան Ալեքսանդրական առաջին գործունէութիւնը կը ըլլայ խմբագրութիւն: 1863 յունուար 3ին Հրատարակած է ԹԻՉՆԻԿ ՊԵՊԱՍԵԱՆ Հանդէսին առաջին թիւը, և ասկէ մնացած է Սրբազանի ԹԻՉՆԻԿ մականունը: Սոյն հանդէսը նախ կ'ուսումնասիրէր պատմութեան շարունակած է մինչև 1866 Ապրիլ 10: Սրբազան Ալեքսանդրական հանդէսը իր ժամանակին գտած է մեծ ընդունելութիւն, և իրեն աշխատակցած են եղեր տանի գարգացած երիտասարդութիւնը, որոց մէջ էն առաջին տեղ կը բռնէ Արմենակ Հայկունի, ազատամիտ ու Համարձակ խոհուններ տէր յայտնի

գրագէտը, որ արտօնատիրաջ բացակայութեան ժամանակ կը վարէր խմբագրութեան պաշտօնը: Ալեքսանդրական Սրբազան տեսութիւններ ունի իւր հանդիսին մէջ, ժամանակակից կենսագր ու խնդիրներու մասին, հոն մեծ տեղ կը գրաւեն լրագրական վիճարանութիւններ, կան և իմաստասիրական յօդուածներ, ոտանաւորներ ու դաւանական կենսագր:

1863 թիւին անձնական գործերով երկար ճանապարհորդութիւն մը կընէ Հեռուգահտէ Սիւ, Ատանա, Վան, Էրզրում, Երզնկա, Սեբաստիա և Կեսարիա: 1865ին կրկին կը ճանապարհորդէ զէպի Վան, ուր իգնատիտ առաջնորդին, (վերջին Պատրիարք ընտրուած), խորհրդով Աղթամարի Խաչատուր նորնախի Կաթողիկոսին վարդապետ կը ձեռնադրուի: Յետոյ ութ ամիս շափ Աղթամարայ վանքի նորահաստատ դպրոցին մէջ վարժապետութեան պաշտօն կը վարէ: Կ. Պոլսոյ վերադառնալով նախ Պատմութի, ապա Ենի Գառնի քարոզիչ և թարգմանի վարժարանին տեսուչ կը նշանակուի:

1869-70 Վեհ. Հայրիկի պատրիարքութեան օրով Բաբերդի առաջնորդ կը ընտրուի: 1870ին Բաբերդի առաջնորդութիւնը կը միացուի Երզնկայի Հեա, սրով աւելի ընդարձակ թեմ կ'ունենայ: Յաջորդ տարին, 71ին, Երզնկայի վանքերուն վերատեսուչ կը կարգուի: Սրբազան ներսէս Պատրիարքի օրով Բաբերդ կը դառնայ Երզնկայի, և երկու տարիէ շափ ալ Երզնկայի առաջնորդութեան պաշտօն կը վարէ և 76ին կը հրաժարի: Այս ատեն Գուգիճանի խնդիրը կը յուղուի Պատրիարքարանի, Առաջնորդարանի և Հայ մամուլին մէջ: Սրբազան Ալեքսանդրական քննադատութեանց կ'ենթարկուի և վերջին կըստիպուի իր սխալը խոստովանել: Երեւի ասկէ ծագում առած էր այն հակառակութիւնը, որ նա ունէր Ամեն. Ներսէս Պատրիարքին դէմ, և մինչև ցայսօր Հակասնոստական մը կը ճանչցուէր: Այս պաշտօնավարութեանց շրջանի մէջ մեծ հոգ կը տանէ վանքերու ու դպրոցներու բարեկարգութեան ու նորոգութեան, և կառուցանել կուտայ Երզնկայի ազգային Գրիգորիանան վարժարան ու Բաբերդի ազգային ուսումնարանը:

76ին Մուշի Առաջնորդ կընտրուի և յաջորդ տարին 77 Ապրիլ 14ին Տ. Գեորգեայի վանքի Տարնոյ Եպիսկոպոս կը ձեռնադրուի: 80 Սեպտ. 1ին Մուշէն Կ. Պոլսոյ կը վերադառնայ և Սիւրբաբայի Ս. Խաչ եկեղեցւոյ քարոզիչ կը կարգուի, միեւնոյն ժամանակ պահելով Մուշի առաջնորդական պաշտօնը: Տ. Յարութիւն Պատրիարքին Հրամանով 1885ի Օգոստոսին վերստին կը դառնայ Մուշ՝ շարունակելու իւր պաշտօն, և միանգամայն վարելու Ս. Յովհաննէս վանքի վանահայրութիւնը: Յաջորդ տարին Վան կը ղրկուի:

1895 տարին էր: Վան խոռվութեանց ու խառնակութեանց մէջ կ'օրորէր Պոզոսեան, Ապոզոսեան կռիւներու էն տաք ժամանակին էր: Երկար տարիներ շարունակուող կը-

ռիւր իր ծայրայեղ դաժակեցումներն հասնէր: Երկու որոշ կուսակցութիւններ կային Հոսուաւորեալներ ու Խաւարեալներ: Առաջինին գլուխ կանգնած էին Վանի կեդրոնական դպրոց աւարտած զարգացած, եռանդուն ու տաք երիտասարդներ և ժողովուրդը, իսկ վերջիններն կը ներկայացնէին բռնապետ աղանքու դասակարգ, յետագայ կ'ընէր, որոնց ներկայացուցիչն էր Պոզոս Եպիսկոպոս: Յոյսի, եռանդի, գործի եռուն օրեր էին:

Բայց վերջինները յաղթանակ տարած էին: Կեդրոնական դպրոց խորտակուած, Հայոց Հայրիկ, Պ. Մ. Փորթուգալեան, Նաթանեան և ուրիշներ աքորուած, այժմ ալ Պոզոս Եպ. Հրատարակ իջած՝ կրկին առաջնորդական գահի վրայ բազմել կ'ուզէր: Բայց ալ արթնցած ժողովուրդը պատրաստ էր, նա չէր կարող տանիլ որ այս անգամ ալ պարտուի կըռիւր սկսած էր, և այս անգամ յաղթանակը երիտասարդութեան կողմն էր:

Քեզարկութեան օր մըն էր Վանի տաններու եկեղեցիներն ալ բռնաթեմաբռնէ կը հասնէին յօգուտ Պոզոս Եպ. Երիտասարդութիւնը թաղական խորհրդարանները կը կոչուէր, քուէտուտները կը շարժախնդր ստիպանութիւնը և թուրք զինուորները զօրաւոր կըրպով կը միջամտէին, խնդիրը այլ կերպարան կըստանար և ուղղակի արխանայի կոտորի կը փոխուէր, շատերը կը վիրահարուէին Հրացաններու ու սուլաններու դէմ երիտասարդութիւնը աղիւսներու տեղատարիով մը կը պատասխանէր: Վերջապէս Պոզոս Եպ. ջանքերը կը խորտակուէին, և թքելով Առաջնորդարանի դրան վրայ կը քուէր Լիմ անապատը: Ասոր հետեւեալը կը լլար բազմաթիւ ձերբակալութիւններ և բանտարկութիւններ և իվերլոյ երեք երիտասարդներու Դոնիա աքորուելը: Խոռվութիւնները կը շարունակուէին, Օրմուկեան Եպիսկոպոսը կարկէն Վան կը ղրկուէր, ուր չորս օր միայն կը մնար: Ահա, այսպիսի փափուկ ու սակնուկ ժամանակ մ'էր կըր Վանի Առաջնորդ Հրաւերուցեալ Մուշի Եպիսկոպոս Ալեքսանդր Սրբազանը:

Իւր առաջին քարոզը կը ինչեմ՝ «Վատ պարտականներն են, կըսէր, ես եկած եմ Խաղաղ ու թիւն բերելու ձեզ»: Ալ խաղաղութիւնը տիրած էր, Թռչնիկն էր Առաջնորդ, ո՞վ գիտէր Ալեքսանդրական տեսուչը, Թռչնիկը ամենքը կը սիրէին: Նա ժողովուրդի մարդն էր:

Հսկայ, բարձր հասակով, առոյգ, կայտառ. յաղթանակով կարմրածով, միջի նիհար, երկու կրակոտ աչքեր ունէր, որոնցմէ ցատում ու բարեխաչնութիւն միևնոյն տեսն կ'արտափայլէին: Իւր խօսքը ազդու էր, ձայն զօրաւոր և իր քարոզները ինքնուրոյն ու ժողովուրդին մատչելի: Այնքան զօրաւոր կամք մը ունէր, որ մինչև յամառութեան ստիպաններ կը հասնէր, ինչպէս կըսէ ժողովուրդը Վերստանի մարդն էր: Չափազանց նախանձախնդիր էր եկեղեցական օրինաց քանիքահանները գիտեմ, զոր ապականած է եկեղեցւոյ մէջ՝ ժողովուրդին առաջ, եկեղեցական աւանդութեանց դէմ գործուած փոքրիկ սխալի մը պատճառով: Եւ աս

պահած էր մինչև իր մահուան րոպէն:

Մեծ հոգ կը տանէր դպրոցներու բարեկարգութեան և շարունակ կ'այցելէր: Որպէս վարագրի Փոխ-Վանահայր, ոյտ առաւ ժառանգաւորաց վարժարանին և նոր դպրոց մը շինեց: Մինչև վերջ պահեց իր վարագրի վրայ ունեցած հոգածութիւնը, և ամեն ամիս հանգանակութիւններ կընէր և կուղարկէր Որբանոցին: Վերջերս ալ կուղարկուէր Սրբանոց, զերծակութեան և առաջ ձագործութեան դարձիներ զրկած էր վարագր:

1888ին Սրբ. Ալեքսանդրական Հեռացաւ Վանէն:

94 Նոյեմբեր 14ին կը վախճանէր Սոյի կաթողիկոս Ամեն. Մկրտիչ Քէֆոյեան: 1895ին Ազգ. Պատրիարքարանի պատուիրակ Գ. Արք. Եպ. Յովհաննէսեանի նախագահութեան տակ Ատանայի մէջ գումարուած ընտրողական ժողովէն Կրիկիոյ կաթողիկոս կընտրուէր Սրբազան Վանէն:

Թիւրք կառավարութիւնը չը հանդուրժեց որ Ամեն. իզմիլուանի գործակիցը կաթողիկոսական գահին վրայ բազմէր, զինք ամրաստանեց որպէս յեղափոխական, ի՞նչ խորտակուած որպէս յեղափոխական իւր դէմ, և ի՞նչ գառն վիշտեր չը կրեց նա: Վերջապէս ընտրութիւնները տարի ետք, անցնալ տարի Փետր. ամսուն Խառն ժողովոյ յատուկ նիստին մէջ ընկանցաւ իւր ընտրութիւնը:

Վերջին տան տարիներ իւր կենսական ցոյց Կ. Պոլսոյ մէջ որպէս Սիւրբաբայի Ս. Խաչի քարոզիչ, երբեք ստանձնելով կրօնական ժողովի Առաջնորդութեան պաշտօնը: Աշխատասէր, եռանդուն ու գործունէայ էր. կը սիրէր երթալ իւր հօտին ետևէն, բայց իւր ձեռքերը կաշկանդուած էին...:

Վանի վերջին սովոր տաններ երբ ներսէս Եպ. կը տնտնար Վան մեկնելու, ինքը պատրաստակամութիւն ցոյց առեց երթալու դէպի սովոր աշխարհը, բայց այդ ալ չը թոյլատրուեցաւ իրեն...:

Գրիգորի Եպիս. մեռաւ աղքատութեան մէջ, և ուրիշներու սպիտակութեան գէզին փոխարէն պարտքերը թողուց: Թողած է և կտակ մը...:

1895ին օրագրով մը կը գրէր՝ Իցի՛ք թէ Հայաստանեայց հօտին համար մի բարեգուշակ զուգարկութիւն լինէր անսնել ՊԵՊԱՍԵԱՆ ԹԻՉՆԻԿը թառած Սոյ լեռան գագաթը, մինչ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾԻՒՆԸ կը հսկէ Արարատի բարձանց վրայ»:

Եւ այսօր Թռչնիկը յաւիտեանս կը լուէ...:

Վ. ՇԱՀԷՆԻ

Տօթթ. Յ. Արշակունի կարգավիճակը... Միջոցառումները յոթուածը, ինքը սա...

Նա կատարեց մեր խնդիրքը և ահա՛ իր գրութեան թարգմանութիւնը կը հարգեմք...

Ի՞նչ Միջոց — ԺԱՄԱՆԱԿ

Ի՞նչ միջոց առաջնորդող յոթուածը ունի կարգացրի. կարենոր հարցեր, կարենոր պատասխաններ կան, սակայն...

Շատ բաներ յսած եմ մեքենայի գործածութեամբ Հայաստանի մէջ ձեռք բերուած...

Հայաստանի մէջ ամեն բան մանրուած է. — Հոգիները փոքր, ընկերակցութիւնը մինչև իսկ...

Ինչպէս ներթերը, նմանապէս մարդկային գաղափարները ձգտողական կեդրոններ ունին...

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՄԱՏՔԻ ԲՆԱԽՈՍԱԿԱՆ ԱՋԻԵՑՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն Նախորդ Թուէն)

Արեւն թէ է պարզ կարմիր հեղուկ մը կերակ մեր աչաց, սակայն մանրադիտակի առջև...

կուղղին ընկերութեանց արարքը և ոչ թէ մարդիկ այդ ոյժերը կը կանոնաւորեն...

Տաճկաստանի ամբողջ ժողովուրդին միայն քառորդը բուն Տաճիկ է, և Հարիւրին 60 Մազմետական. եթէ սակայն Արարիան և Թարապակուսը մէկ կողմ...

Տաճկաց դէմ ոչ մազմետականաց քաղաքականութիւնը եղած էր մինչեւ վերջին տարիները, անոնց զեղիսութիւնն ու ընչաւորութիւնը մշակել և անկէ օգտուել: Այս յարցում էր այն աստիճան որ, Եւրոպական Տաճկաստանի մէջ Յոյները, Ասիականին մէջ Հայերը եղան ամենէն կարեւոր տարրերը, որոց առաջ սկսան նոյն իսկ Տաճիկները խոնարհիլ: Հայերն այն աստիճան զօրացած էին տրեստական տեսակէտով, որ կարծեցին քաղաքականապէս կարենալ այդ երկիրը գրաւել, սակայն ժամանակը կանխեցին, չսպասեցին. այդ դէպքերը զմեզ տասը տարի յետաձգեցին, եթէ ոչ աւելի. տասը տարուայ մէջ մեր երկու Հարիւր հարզար հոգեւոյ կորուստը պիտի չաճենք: յուսանք:

Ըսելով թէ կեդրոնական ոյժերը կուղղեն ընկերութեանց արարքը և ոչ թէ մարդիկ այդ ոյժերը կը կանոնաւորեն ըստ իւր կամայ, յետ ուզեր ուրանալ մարդկային ազատ կամեցողութեան գոյութիւնը, սակայն ըսել կուզեմ թէ ազատ կամեցողութեան արդիւնքը չկրնար վայրկեանական լինիլ, այսինքն մի քանի անհատից կամեցողութիւնը չկրնար ամբողջ մի ժողովուրդի ընթացքը կանոնաւորել: որչափ անձեր կը փափաքեն որ Տաճկաստանի յանապիմաբար արարքը բոլորը միանան, իրենց ոյժերը կեդրոնացնեն և համախորհուրդը գործեն. սակայն մինչ ցարդ անկարելի եղած է, նոյն իսկ Հայ տարրերը միացնել, նոյն իսկ այս տարրերուն մէկ մէկու հակառակ գործելն արգելել. կեդրոնախոյս ոյժեր կան, որք

կապրի, իսկ սպիտակ հատիկն արեան հեղուկին մէջ. Բնաշրջման (evolution) վարդապետութիւնն կուսուցանէ մեզ թէ բոլոր կենդանիք, անշնամբիլի ճճիներէն սկսեալ մինչև մարդը, այսպիսի միաբնակից (unicellular) ամբիւսներէ յառաջ եկած են, անոնց ըլլալ փոխակերպումներն ու բազմապատկումներն են: Բնախօսութիւնն ալ կուսուցանէ թէ մարմնոյ բոլոր մասերն ու զանազանութիւններն ուսիր, ջիւղ, մեկան, ուղեղ, սպիտակ հատիկներու զանազան փոխակերպումներն են ոտակ: Ամբիւսն հիմն է ու արմատն կենդանական հսկայ ծառին, արեան սպիտակ հատիկներն ալ՝ մարդկոյնի մարմնոյ այս հրաշագործ մեքենային: Բնախօսը կը նկատեն այս սպիտակ հատիկներ իբր աղբիւր ու կեդրոն ընտանիքական բոլոր զօրութեանց, անոնք են որ սնունդը ու նորոգումը կը մատակարարեն բոլոր անդամոց, անոնք են որ իբր նախնիութ (protoplasm) զանազան փոխակերպութեանց կենթարկուին ու կըլին անոնց ուղեղի ըլլել անդին սրտի. անոնք մի կանանց, անոնք ուսկորի, անոնք են վերջապէս որ մարդկային կենդանի ու մաշող մեքենան կը վերաւերեն ամեն վայրկեան, որ կը յայտնայ ինչ անոր հոգին ու շողին: Խորհէ մարմնոյ

զօրաւոր կերպով կը գործեն: Սխալ է այն գաղափարը թէ Հայ երիտասարդները միայն բոշկութիւն կամ աստուածարանութիւն կուսանին. այսօր Հայ ազգն ունի ներկայացուցիչներ գիտութեանց ամեն ճիւղին մէջ, կը պարունակէ իր մէջ բոլոր պէտք եղած տարրերը ամենամեծ անտեսական շարժում մը յառաջ մղելու համար, սակայն ձեռքերնիս կապուած է. ազատութիւնը՝ զոր կուզենք, անհրաժեշտ է գործելու, մինչդեռ այս ան զօրութիւնն է, որ մահ կը սպառնայ իշխող տարրին, որ իր բոլոր կամեցողութիւնը կեդրոնացուցած է աստուական բոլոր շանժում օրորոցին մէջ խեղդելու:

Արդարև Տաճիկ տարրը, իշխանութեան գաղափարով զեղիսացած և թմբած, մինչ Հայաստակ ազգերը բոնութեան մուրճին տակ կարծրացած, զօրացած, երկու հակառակ գործութիւններ կը կազմեն. եթէ Տաճիկն ձեռքէն օր մը սուր լայնայ, զոր նա սրելով ժամանակը կանցնէ, հըպատակ ազգաց ազատութիւն և հաւասարութիւն տրուի, առաջինը չպիտի կըլնայ միջոց վերջնայ Հետ, որչա՞ք պիտի անցնի Հարատուութեան Հետ մէկտեղ գործութիւն և իշխանութիւն:

Տաճիկ ժողովուրդը զգալի կերպով զայն նախատեսելով հանդերձ, գոհ չէ ներկայ գործութենէն, վստահի չափազանցութեան հասած է. վայրկեանական միջոցներ, ինչ որ էր այն անվերջ և սոսկալի աւարատութիւնը 1895-96 տարիներուն, նպատակ ունին միանգամայն Տաճիկ ժողովուրդի աչքին փոշի ցանել, և կամ լացող տղուն ձեռքը կտոր մը շաքար տալ:

Գալով զլիւար խնդրին. — Հայաստանի մէջ երկրագործական նոր մեքենաներ ներմուծելու խնդիրը, ըստ իս անտեղի է. երկաթուղի եղած անտեղ ալ չեղած անէն թէ ստանա՞ծ եմ. Տաճկաստան ներկայ պարագաներուն մէջ երկրագործական ապագայ չունի, այսինքն ինչ որ կարելի է ընել, շատ սովոր և անկարելի է երբ կարելիութիւնը ներկայանայ, ժողովուրդը զայն իսկոյն կը գործադրէ:

Սակայն ուրիշ է անային արեւստաներ ներմուծել. խալիլ գործը, օրինակի համար, ամբողջ Տաճկաստանի մէջ շատ յառաջդիմելու վրայ է, ներկեր, նոր ձեւով ածան սէզլիբաններ, մեծ ծառայութիւն կրնան մատուցանել. նմանապէս արծաթ և պղինձ թափելու և գործելու համար գործիներ, փայտ գործելու համար (մառանկողի վերաբերեալ) գործիներ և արուեստին վերաբերեալ ծանօթութիւններ նմանապէս կարեւոր են:

Ազգային դպրոցները բոլորովին կերպարանափոխելու է. ստանք մէկ մէկ արուեստանոց դառնալու են և կամ առուստուրի դպրոց. ասոնց հոգաբարձութիւնը յանձնելու է դրական մարդոց, եթէ նոյն իսկ անտաշ լինին ևն:

մէջ սփռուղ ըլլալ միլիոններով արեան հատիկներու վրայ, խորհէ՞ թէ առանց կազմակերպում, ձեւափոխում և երակաց մէջէ հոսում կը կատարուին ու կ'եղանակաւորին համակարկան ջղային գրութեամբ, խորհէ անդիտակից կենաց այս գաղտնածածուկ գործունէութեանց վրայ և յիշէ թէ մեր մտաց մէջէն սուրբացող ամեն խորհուրդը ու զգացում իւր վիստակար ու բարեբար ազգեցողութիւնն ունի այս անդիտակից կենաց գործունէութեանց վրայ, թէ կը ներգործէ այն մարտողութեան, սպիտակ հատիկներու կազմակերպման, անոնց շրջաններու ու զանազան փոխակերպութեանց վրայ: Արեան սպիտակ հատիկներն արարքն կը կազմեն, զարմանալի է միլիոն, որ երբ նախանձով, վախով, բարկութեամբ կամ ստուերութեամբ զայն արտագրող մեքենան խանգարման մէջ դնենք, մարմնային տկարութիւն, նուազում կամ հիւանդութիւն կուսնենաւ: Երբ վախ սեղ հաւատք, ատելութեան տեղ սէր, յոյս դնենք, հրաշք է միլիոն որ շատ հիւանդութիւններ բուժին: Յանկարծական սաստիկ վախն եթէ այնքան հիմնապէս կը խանգարէ բոլոր մեր անդիտակից գոր-

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐՄԱՍՍԱՆՆԵՆ

99, Օգոստոս 21, Թաւրիզ.

Սայմաստի խառնակութիւնները, վարդան գիւղում կատարուած սպանութիւնները և Շարաֆ պէկի Սալմաստի վրայ արշաւելու լուրը հաղորդել էի ձեզ: Այժմ Սայմաստում շատ աւելի խառնակ վիճակ է տիրում: Սազմանին մօտիկ Հայ գիւղերի բնակիչները վարդան գիւղի սպանութիւններից սարսափահար եղած, թողել են իրենց տունն ու տեղ և քաշուել կեդրոնական Հայաստան գիւղերը:

Մի քանի օր առաջ լուր հասաւ թէ՛ Սալմաստի կտավարիչ Նիզամ Սալիմանէն երեք հարիւր ձիաւոր սարսաղներով շրջապատել է Ղալասար գիւղը. սոսկալի անգթութիւններն են զարծուել, սպանուել են երկու հոգի և վիրտորուել մի քանիներ, և սրպէս թէ այս խոթուութեանց առիթ տուել է 40 զաշահներ Սալմաստ մտնելը: Ղալասարի Հայերը հեռագրատու լեցուած՝ Ալվատեան Արբազանին դիմեցին: Եպիսկոպոսը շուտով կը պարտասուել մեկնելու Սայմաստ: Սպասում ենք աւելի մանրամասնութեանց, որ խոստանում եմ հաղորդել ձեզ:

Մ.

ՆԱՄԱԿ ՈՒՍՏՐԷՆ

Սկստ. 18.

Անցեալ կիրակի տեղի ունեցաւ Հայկական Գրադարան Անդամական Ընդհանուր ժողովը, օրակարգ ունենալով՝ վարչական մարմնի վեցամսեայ շրջանի համարադատութիւնը և յավորք շրջանի վարչութեան ընտրութիւնը:

Ժողովին ներկայ էին 36 անդամները: Նախ վարչութիւնը ներկայացուց վեցամսեայ հաշիւը: Մուտքը եղած էր 201 տարար, իսկ ելքը \$ 136.80. Գրադարան պատրաստ դրամ ունի այժմ \$ 64.20, բացի անկէ որ 20 տղար դրուած է թիֆլիզ կեդրոնական Գրադարանային, և կը պատուի գրքերուն: վարչութիւնը իւր աստեղագրութիւնները ցուցնելով, տեսնուեցաւ որ 17 ժողովները ունեցած է կանոնադրապէս:

Սկսածմեր 3ի անդամական ժողովին մէջ Մ. Մամուրեանի յորեկանին առթիւ Հանգանակուած գրամի գործածութեան մասին Գ. Յ. Գառապեան բացատրութիւն պահանջեց. վարչութեան Ատեսապետը պատասխանեց թէ նուէրը զրկուէր է, սակայն ոչ թէ վարչութեան ձեռքով ու քիտուել համար, այլ մասնաւորներու կողմէ: Այս մասին պահանջուեցաւ Դիւան մը ընտրուի՝ այս գեղ-

ծուեցութիւններ, անբանաւոր է միթէ ենթադրել թէ բարգաւազար մեղմ բայց շարունակական անձկալից խորհուրդներ, տխուր զգացումներ կը խանգարեն մարմնոյ վերաշինութեան այս փափուկ գործողութիւնները:

Ես կը հաւատամ թէ մեր մարմինն Հայելի մ'է թափանցիկ, որոյ վրայ կը ցողանայ մեր հոգին իր բոլոր երկնային ներշնչումներով, յայտնովն ու յոյզերով, երկնաթիւղ տեղըրովն ու իր ձեռքով, որոյ վրայ կը պատկերանան իւր ամեն ստորին և գունդիկ խորհուրդներ, բոլոր նողկալի մտածումներ, թէ է մահկանացու աչքեր անկարող ըլլալն նշմարել զայն: Ես կը հաւատամ թէ մարմինն ժառանգութեանց և հոգեկան ամեն առաջինութեանց կամ մտութեանց: Բնախօսական այս պարզ ճշմարտութիւն որչա՞ք ազդուապէս կրնայ քարոզել մեզ նրբին մաքուր կենաց հարկն ու կարեւորութիւն: Երանի՛ անոնց որ կենաց այս բուռն պայարարին մէջ կրնան ունենալ խաղաղ, վրաստահութեամբ ու հաւատքով լի միտք մը, որոյ փրկարար ազգեցողութիւն որքան խորամտտ այնքան ալ տարածուէ, որքան անգագալի այնքան ալ տարածուէ:

ծում գործողները դանակելու համար: Ատենակազմ ընտրությունները Պր. Պողոս Գույումճեան, իսկ Ատենակազմի Պր. Սարգիս Սարաֆեան: Ժողովը երկուստեք՝ թէ վարչութեան և թէ Ընդհ. Դիւանին լըսելէ յետոյ, իւր արդար վճիռը տուաւ: Եկատելով որ Ընդհ. Դիւանը գիտակցաբար, սակայն փառասիրութենէ մղուած գործած է այդ զեղծումը, (որովհետեւ Պարոնները փառքի քմահաճոյք ունեցնել են իրենց անունը՝ Մ.Մամուրեանի նուիրատուութեանց հրատարակութեք ցուցակի մէջ հրատարակուած անունը), ժողովը գրեթէ միաձայնութեամբ, պարտաւանայ քուէ տուաւ Ընդհ. Դիւանի ատենակազմ Պ. Յովհաննէս Պօղոսեանի և Ատենակազմի Պ. Յարութիւն Բրուսեանի: Ուրախ եմ որ Պարոնները գէթ գլխիկոր կարմրելու ամօթը զգացին, եթէ կեղծ ներկ չէր այդ իրենց երեսներուն: Այլ անցաւ փառասիրութեան ու շահախնդիրներու ժամանակը, ժողովուրդը օրը օրին աւելի գիտակից կը դառնայ և կը սովորի գնահատել ու պատժել:

Յետոյ ժողովը նախապատրաստուած եռապատիկ ցանկէ մը գաղանի քուէարկութեամբ ընտրեց յառաջիկայ վեամանայ շրջանի համար նոր վարչութիւն, որոնք առհասարակ փառասիրութեան արժանի անձնաւորութիւններ են: Սակայն անոնց գործունէութեան օգտուէտ արգելելը մը տայը կախում ունի և անդամներու բարոյական օժանդակութենէն: Յաջողութիւն կը ցանկանք նոր վարչութեան:

Գ.Ա.Ռ.Ն.Ի.Կ

ՍՏՈՐԱՅԱԾ ՏԻՊԵՐ

(ՆԱՄԱԿ ԼՈՎԷԼԷՆ)

Սեպտ. 19.

Կեանքի ստորնացած բարքեր, ընկած, ապականած մարդ արարածները կան, որոնք դժբաղդաբար Հայ անուն ալ կը կրեն, որոնք աճօթի ու պատուի ըզգացում չունին, այսօր մեր մէջ կ'ապրին, մեր շուրջ կը շրջին. անոնք բարդախաղի մօլի հերոսներն են, աշուրներն ուսած կարմրած, զէմքերին մեայլ մտախոհ, միտքերին հրատարակուած, դրամ գիզելու մաթիմատիկան հաշիւներով զբաղած, սիրտերին զգացումէ զուրկ, բարքերին ներսուր և հոտած, խաղի սեղանին անձնատուր կը գլորին զէպի անկման, կորուստի անդունդը: Բանիցս մամուլ իւր խարազան իջեցոց՝ զանոնք զէպի բարոյական ճանապարհը դարձնելու համար, քանիցս ընկերական շրջանակներու մէջ խրատուեցան, յանդիմանուեցան: Սակայն շատ ճիշդ կըսէ ժողովրդական առածը՝ Աւելի սպանի, խելին խրատ ինչ ընէ, գուցէ մաքրութեան համար գործածուած սպանիք աւելի կը փայլեցնէ իրենց սեւը:

Չէ՞ք հաւատար, լսեցէք օրինակ մը:

Երանի՜ անոնց որ աշխարհի բոլոր փոթորիկաց ու յեղաշրջումաց մէջէն, բոլոր վիշտերու և առաւապանաց մտի մամպիւրու մէջէն կրնան հաւատայ աչքերով տեսնել զթառառ Հայր մը, Արարիչն ու կառավար բոլոր տիեզերաց:

Նախապատմական դարերէ իվեր ամեն կրօն և ամեն ազգ ունեցած է իւր սրբավայրերն, ուր մարդիկ կրօնական ջերմ հաւատքով ու խոտաբանութիւններ են կատարած իրենց հիւանդութիւններէն և ախտերէն բուժուելու համար: Եւ այսօր իսկ, գիտութեան ու լուսաւորութեան այս դարուն մէջ, ամենէն քաղաքականացեալ ազգերն ունին իրենց Բրիտանիական Գիտութիւն (Christian Science) կամ հաւատքով բուժման (Faith Healing) նման վարդապետութեանց հետեւող խումբեր: Ծաղրէ, եթէ կուզեն, այսպիսի վարդապետներու նախապաշարունակ գիտութեան բոլոր փաստերովն ու ապացոյցներովն յայտարարէ թէ քարէն ու փայտէն, տամբարէն ու խորանէն կամ հանդերձի քանցքէն բնա Ֆիզիքական զօրութիւն մը չեն կրնար ազդել հիւանդին ու ախտաւորին, թէ և Գրիգոր Լուսաւորչի մը կամ Ս. Կարապետի մը նուիրական ստապանաբար ըլլայ այդ քար ու

Պօսեցի վարդան անուն ստոր արարած մը, բարդախաղի զեկավարը, հոս ուրախութեամբ մը կը պատմէր թէ՛ Ե՞րբ լրագիր տուի և կարգացրի որ Լովէլի մէջ իսկ մ'ար կը խաղան, առանց կտոր մը հաց անգամ բերանս դնելու, մէկ շաբաթ Պօստոնէն Լովէլ հասայ. ուրախ եմ որ լրագիրները առանց մեր ընկերութիւնը ծախքերու ենթարկելու, ձրի ծանուցուցում կընեն մ'ի համար, և մեր գործի յառաջդիմութեան կը նպաստեն: Ո՛վ ժամանակ, ո՛վ արքայ, մինչ լրագիրը գտնուի կը մտրակէ զէպի բարոյականութեան ճանապարհը դառնայալ համար, անոնք աւելի կը խրին, աւելի կը մխրճին աղտի ու ապականութեան մէջ... և ասանք մարդիկ են:

Շուրջս կը նայիմ և ստորափ կը զգամ անկման այս պատկերին առաջ: Վտանգը աղետաբեր է, պէտք է շարիքին առաջն առնել: Հոս առաջ 7-10 հոգի էին միայն բարդախաղի մտրութեան արտադրուածները, այժմ 40-50 մարդ կրի վտանակ մը կը կազմեն: Սեպտ. 16ի շաբաթ գիշերէն մինչև երկուշաբթի առաւօտ ապականութեան ու սնկման տեսարան մը կար հոս, 45 հոգի, Թօմօն փողոցին թիւքերու ընկերարանի մէջ, երեք հազար տղար առջևին դրած, ծխախոտի ծուխ ու մուխի գուլաններու, հայհոյանքներու տեղատարափի մէջ թաղուած, ոգիւնք ըմպելիներու շիշաներով շրջապատուած, առանց վայրկեան մ'անգամ հանգստանալու, գիշերը ցորեկին խառնած՝ կը խաղային, կը վառնէին, կը կողտոյնէին զիրար, և կենային... Ստորնացած տիպեր... Այս անամօթներու խումբին մէջ կան նաև տասնի չափ Յոյներ ալ, իսկ թիւքերը չեն խաղար միայն դուռներ ու փողոցները կը հսկեն և իրենց ուսան վարձքը կը ստանան:

Ինչո՞ւ Հայերի մի դատակարարի համար շարիքի պատուը պայպէս քայքայուցեր է, մինչ իրենց աչքի առաջ կը տեսնան բարդախաղը քանի՜ անձեր անբաղդացուցեցր է, քանի՜ ընտանիքներ խորտակեր, օրուան հացին կարօտ, թշուառ է դարձուցեր: Բայց ալ հասկացողութիւններն կորսնցուցած են, ամօթի զգացումներն մեղուցած: Անցեալ օր Մաշտոց Հայրատարը հոս կ'գտնուէր, երբ մէկին կը խրատէր որ այդ կործանարար մղուէր կենէն ետ կանգնի, այդ մէկը առանց կարմրելու անպատկառօքէն պատասխանեց՝ «Հայր սուրբ, այս շաբթի ու 200 տղար կորսնցուցած եմ, մինչև ետ չըստանամ չեմ դադարի խաղալ»: Եւ այդ պիտիները բնաւ չեն ուզեր հասկնալ, իսկ այդ կորսնցուցած գտնուելու պատճառաւ է որ շատեր եռապատիկ. տասնապատիկը կը կորսնցունեն: Լաւ է ետ դառնալ ճանապարհէն քանի բոլորովին խարդախուած չեն, քանի մաքրութեան փոքրիկ կայծ մ'է մնացած սրտին մէջ, եթէ ո՛չ ապագան սարսափելի է և վերջը շարիքները կը ծնէ:

անոնց նշխարներն պարունակէ այդ տամբար, ու թէ և Բրիտանի մը ըլլայ Հանդերձի այդ քանցք. ծիծաղէ եթէ կուզես հաւատացեալ Բրիտանիէից այն սրբատարուղի աղօթից ու աղերսանաց վրայ ուր առ Աստուած կը բարձրանան վշտակէզ տառապալից շատ հոգիներէ և բուժում, առողջութիւն, սիրտիանք, կենսք կը հայցեն պաղատազին. մատնանիշ բրէ այգիպիտեաց՝ բնութեան տնփոփոխ, անասարբեր ու անողոր օրէնքներն, ցոյց տուր թէ Արարչի մը բնութեան հակառակ է այս աղօթից ի պատասխան Ֆիզիքական կենաց օրէնքներն փոփոխել կամ անոնց գործունէութիւններն այլալիւ: Եւ սակայն որչափ ալ բանասիր ու ճշմարիտ ըլլան քու փաստեր, սա իրողութիւն մ'է թէ մարդկութիւնն բժշկութեան համար գիւժած է միշտ ու կը գիւժէ քարին ու փայտին, նշխարին ու աղօթքին: Իմաստակութիւնն միայն արհասարոտ ու ծաղրող կը լլայ: Ճշմարիտ փիտութիւնն համեմատ է, ամեն բան կը քննէ, ամենէն կը շտ ու անընկալան աւերողապաշտութեանց դարաւոր փոշիներն կը քրքրէ ու անոնց կողերու տակ իսկ ճշմարտութեան կայծեր կը փնտէ, և յաճախ չոն՝ նախապաշարմանց ու աւելցրեալապաշտու-

Մեր Սրբազան Առաջնորդին ուշադրութիւնը կը հրաւիրենք, օգնութեան հասնելու, բարձրացնելու այս ընկած բարքերը: Թէ և Սրբազանը անցեալ կի բակէ հոս եկած էր մասնաւոր խնդրով մը, սակայն դժբաղդաբար շատ կարճ ժամանակ միայն մնաց, և մինչև շտապեցինք զինքը տեսնել, ինքը արդէն մեկնած էր և ճիշդ այն ատեն էր որ ետուն կեանք մը կար բարդախաղի ապականարար անգանին շուրջ:

Կ. ԳՈՒՐԳԷՆ

Նոյն թղթակիցը Սեպտ. 24 թուակիր նամակով մը կը հարգողէ թէ՛ սեպտ. 23ի շաբաթ գիշեր ոտտիկանութիւնը այս խաղամոլներին ընկարանը շրջապատելով ձերբակալած է 10 հոգի, որոնցմէ մինը ինքզինքը երկրորդ դատիկունէն վազնետեղով խոյս է տուեր:

ՆԱՄԱԿ ՊՕՍՏՈՆԷՆ

Սեպտ. 18.

Ժամանակէ մ'իվեր յղացած գաղափարը կենդանութիւն առաւ երէկ, ուր Պօստոնի հայերը ժողովուած էին Ս. Պօղոս եկեղեցոյ մաստի մէջ (մեր սովորական սրահը) կազմակերպելու Հայ Ամերիկեան քաղաքացիական Ակումբ մը. խնդրոյն վրայ բուական խօսուելէ վերջ յանձնարարութիւնը կազմուեցաւ, որպէս զի Ակումբի կանոնադրութիւնը պատրաստէ ու մօտ օրերու մէջ ընդհանուր ժողով գումարէ, այն ատեն Ակումբը պիտի որոշէ ո՛ր կուսակցութեան ուղղութեան հետեւիլը:

Բնան ու մէկ անուն արձանագրուեցաւ, կը յուսանք թէ մօտ ատենի մէջ Հարիւրի կը հասնի. յաջողութիւն:

Փափաքելի է որ այս շաբաթուան յառաջ գայ միւս բոլոր հայաշատ քաղաքացի մէջ: Մեր հասկացող պատկարգը աւելի շատ պարտք ունի սոյն ձեռնարկին աշակցելու, որով աւելի պատուաւոր դիրք մը կրնան բռնել, և թէ հայերու օգտակար կրնան ըլլալ: Մերք մեծ յոյս ունինք որ այս տեսակ կազմակերպութիւնները շատ օգտակարութիւններ կրնան առաջ բերել, սակայն նախ իմ կարծիքով պէտք է որիշ քաղաքներու մէջ կազմուած նոյնանման ակումբներ չետ յարաբերութեան մտնել, խորհրդակցիլ և այն ատեն կրնանք Ամերիկեան կառավարութեան մի քանի հարցումներ ընել:

Վ.Ա.Ղ.ՍԻ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՅԻՇՍԱՍԿԱԳԻՐԸ

Կ. Պօլիէն «Լօնտօն Թայմզ»-ին կը հեռագրուի:

Հայոց Պատրիարքը տեսնելով որ Սուլթանի ըրած խոստումները չիրագործ-

թեանց այդ կոյտերուն տակ թաղուած կը գտնէ ճշմարտութեանց կայծեր, փոշտ ու անխալ արդարեւ, որք կրնան, սակայն, լոյս ճառագայթել՝ եթէ միայն դուրս գան իրենց փոշոյն զէզերուն տակէն:

Հաւատքով եղած բժշկութիւններու պատմութեանց մէջ բնական է որ կրօնական մոլորաբանութիւնն շատ շտապաբանութիւններ, շտա սխալներ, մինչև իսկ հրաշքի երևոյթ առաւ համար շատ ստույթներ մացուցած ըլլայ: Այս ամեն շտապաբանութիւններն ու ստույթներն ընդունելով հանգրձմ՝ կը մնան դեռ բազմաթիւ իրողութիւններ, որք ճշմարտութեան ամեն գոյն ունին և որք արդիւնք են եղած ստիկ հաւատքի: Արդ, ընդունելով թէ հաւատքով բժշկութիւններ եղած են ու կրնան ըլլալ, սա հարցումն կը ներկայանայ մեզ թէ բնախօսութիւնն կրնայ մեկնութիւն մը առ այսպիսի բժշկութեանց վրայ ու կրնայ ճամաճայնեցնել զայնս բնախօսական հաստատուն օրինակ հետ:

Գիտութիւնն չկրնար ընդունել թէ քարէն ու խորանէն, սուրբ մը նշխարէն կամ հանդերձի մը քանցքէն բուժիչ զօրութիւն մը դուրս կուգայ ու կ'ազդէ

զեւցան, նոր յիշատակագիր մը զրկեց Սուլթանին իմացունելով թէ՛ եթէ իր ըրած պահանջներուն գոհացումը չտրուուի, ինք և իրեն հետ Գուժ Գարուի ժողովը պիտի հրաժարին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԷՆՔ


Էջմիածնի պաշտօնական օրկան «Արարատ» ամսագիր իր վերջին պրակին մէջ կը գրէ թէ՛ յանուն Սինոդի տրուած Հայրապետական կոնգրակ մը կը հրամայէ կրօնական ժողովներուն ասկէ վերջ հինգերորդ տարեկան ազգականութիւն ունեցողներուն պահուելու թոյլտուութիւն ընել:

ՀՈՒԱՏՍԱ

Հոյանտայի մէջ Ս. Մինաս Չերազը և հայկական խնդրը պաշտպանող Տօք. Ա. Բիւրէր, մտադրէ երեսփոխանական ժողովը մէջ հարցապնդել թէ կառավարութիւնը ինչո՞ւ չի թոյլարարց Ս. Մինաս Չերազի ասնորանել Բրիտանիայ երեսփոխարաց Ընկերութեան սրահին մէջ: Մեծանուն սօքթէօրին պիտի ձայնակցին բազմաթիւ Հոյանտայի ազաւական և հայասէր երեսփոխաններ:

ՌՈՒՍԻԱ

Մոսկովայի համալսարանին տրուած զուանդներու խնդրագրերնէն 300ի չափ մեծութեամբ են, որոց մեծագոյն մասը Հայեր և Հրէաներ են:



ԲԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԵՐԵՒՈՅԹ ՄԸ

Հաւաստի ուղբերներէ կը տեղեկացուի թէ՛ Անգլիական կառավարութիւնը իր գործակալներուն միջոցաւ վճարուած ձեռնարկներ կընէ Սուլթանին Սայիֆէ-ութիւնը շքանշաններու: Երեւայ գործակալները եմէնի մէջ հաւաքած են բոլոր գլխաւոր շեխերը, զանոնք հրահանգելով հանդերձ թէ պարտին Սուլթանին կեղծ խալիֆէութիւնը տուալիլ և ունեցող իրենց օրինաւոր Սայիֆէն: Խոստուցներ են Անգլիական կառավարութեան օժանդակութիւնը այս ձեռնարկին մէջ թէ դրամով և թէ զէնքով:

Ռուսական «Նովոյի վրիմի» սաստիկ դարմացմամբ կը յարձակի Անգլիական կառավարութեան այս ձեռնարկին դէմ, նկատելով թէ Անգլիական կառավարութիւնը իր դիրքը կեդրոնական Ասիոյ, Հնդկաստանի և Եգիպտոսի մէջ ամրացու-

հիւանդին: Գիտութիւնն զժուար կը գտնէ հաւատար թէ Արարչին աղօթից ի պատասխան հրաշքեր կը գործէ, բունական օրէնքներն կ'այլալի կամ Ֆիզիքական օրէնքներէն դուրս մասնաւոր միջամտութիւն մը կընէ մարմնոյ բնախօսական գործողութեանց վրայ և այսպէս բժշկութիւնն կուտայ հիւանդին: Բայց գիտութիւնն կ'ընդունի, ինչ որ բնախօսական քննութիւնը կը թուի սպացուցանել, թէ մարմնոյ անգիտակից կեանքը, սոյնիքն համակրական ջղային գրութեան ներքոյն թէ կամ կատարուող բոլոր գործունէութիւնք շատ սերտ կապերով կապուած են գիտակից կենաց հետ, սոյնպէս սր մեր մտաց մէջ սիրող անն երկիւղ ու հաւատք մեր կարծածէն շատ աւելի մեծ աստիճանաւ կ'ազդեն մեր անգիտակից կենաց: Վախի փորձառումն ու հաւատքի վերահաստատում կրնայ այսպէս բուժումներ արտադրել: Բնախօսական օրէնք մ'է այս որ կրնայ յուժել հաւատով բուժմանց վարդապետութեան առեղծուածն:

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

(Շարունակելի)

նեւու համար է որ այդ արարքներուն կը գրուի:

Հօնանոն թոյլատրելի կըսէ «Ատենէն եկած վերջին լուրն այն է թէ եմէնի յեղափոխական շարժումները շատ աւելի կարեւորութիւն ստացած են, և կը կարծուի թէ անոնք դրոշմ օգնութիւն կըստանան: Սիրիական, Եգիպտոսէն, Կեդրոնական Ասիան և Հնդկաստանէն եկած լուրերը կը հաւաստեն թէ՛ Մալմե-տական աշխարհին մէջ, բառին բուն նը-րանակութիւնով, մեծ համակրանք կ'ա-ծի դէպի եմէնի յեղափոխականները»:

Այս վերջին լուրը ևս կրնայ հաստատութիւն աւել առաջինին թէ՛ Անգլիա վերոյիշեալ մահմետական երկիրներուն մէջ աշխատած և Սուլթանի խալիֆէ-ութեան դէմ հակակրանք ու Արաբներու օրինաւոր խալիֆէութեան ինպատակ հասարակաց կարծիք մը ստեղծեր է:

Հայկական վերջին ջարդերէն ետքը Սուլթանը տեսնելով Անգլիոյ ի նպաստ Հայերուն բռնած քաղաքականութիւնը, մէկ կողմէ անկէ վրէժ լուծելու և միւս կողմէն Անգլիոյ դէմ սպառնական դիրք մը գրաւելով զայն ստիպելու նր խոնարհի իր դիւային կամքին առջև. Բրիտանական կայսրութեան մէջ գտնուող մահմետականները կը գրգռէր Անգլիոյ դէմ:

«Նոր Կեանք» քաղաքական հաստից յօդուածով մը ցուցուց թէ անգլիական նոր քաղաքականութեան մը ամբողջ նշաններ կան, որոյ բուն ներքինը դեռ քաղաքական կը մնայ. ինչ որ առայժմ կը տեսնուի արտաքինապէս, այն է թէ նա կուզէ թիւրքոյ բարեկամութիւնը վերանորոգել: Անգլիա իր այս նպատակն իրագործելու նպատակաւ շէք կրնար ըսպառնալից, վրէժնորդի և յստուռ միջոցներու գործիք Սուլթանին առջև պարտադիր երևոյթն առնել. նա լաւ ըմբռնած է առակին ճամարութիւնը թէ «Թիւրքը բարեկամ ընելու համար՝ զայն անգամ մը ծեծէ»: Անգլիոյ այս նոր խաղին ազդեցութիւնը կրկնակի է. մի կողմէն վախ տալ Սուլթանին ու միւս կողմէն անոր միակ դէնքը՝ խալիֆէութիւնը շախմատել:

Երբ Սուլթանը դադարի մահմետական աշխարհի խալիֆէն ճանչցուելէ, և երբ Անգլիա ինքը իւր օտանդակութիւնովը ստեղծէ խալիֆէութիւն մը, այն ատեն՝ ալ Սուլթանէն վախն սլիք բան մը չունենար, ու ընդհակառակն Սուլթանը, ինքզինք զինաթափ զգալով ըստիպեալ պիտի նետուի Անգլիոյ գիրկը:

Իզմիր անուն յաճախուորը որ Սեւ Լեւան իշխանին զբօսանաւին առաջնորդելու համար գացեր էր, Պեհլուի մէջ խաղեր է: Այս բանը շատ գէշ ազդեցութիւն ձգեց իշխանին վրայ, որը կարծիք յայտնեց թէ պէտք է անոր հրամանատարը, որ ծովային նախարարին որդին է, պաշտօնակն ըլլայ:

Պալատականներ կըսեն թէ Սուլթանը Սեւ Լեւան իշխանէն խնդրած է որ կայսերական անձնական պահապան գունդը զօրացունելու համար խումբ մը մարդիկ տայ, զի վերջերս Սուլթանին վստահութիւնը ասիացիներուն վրայէն խախտած ըլլալով՝ անոնց տեղ Գարատաղցիներ կանէ:

Պալատին պահապան գունդի սպաներէն 8 հոգի թրիպօլիս աքսորուեր են. պատճառը յայտնի չէ:

Մանիլայի Հերոս ՄՈՎԱԿԱՆ ՏՈՒԻՆ Նիւ Եորք հասաւ: Ընդունելութեան նկարագրութիւնը յաջորդ թուով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ուստի Հայկական Գրադարանի վարչութիւնն անհրաժեշտ մի հարցի համար կը փոփոխէ բոլոր գրադարաններու կանոնադրութիւններէն մի մի օրինակ ունենալ, ու այս առթիւ կը ինքզինք Միացեալ Նահանգաց մէջ գտնուած բոլոր գրադարանաց վարչութիւններէն որ հաճին իրենց կանոնադրութիւններէն մէկ մէկ օրինակ զրկել հետեւեալ հասցէին:

Armenian Library
63 Laurel St., Worcester Mass.
Ի Գրմաց Ուստի Հայկ. Գրադարանի վարչութեան: Ատենադպիր Կ. Խ. Թաշճեան Ս. Գ. Ռատիկեան

ՈՒՆԵՍԻ ԶՕԳՕԲԸՆ

Յառաջիկայ կիրակէ, Կէս օրէն վերջ տալով ճիշդ 2 ին, Ուէսթ Զօպօքընի Ազատ Լսարանին մէջ (Սըւոյ փողոց) տեղի պիտի ունենայ Հոգաբարձութեան, Գարոցի և Եկեղեցւոյ առկա մնացած գործերու վերջնական կարգադրութիւնները:

Կը խնդրուի բոլոր Ուէսթ Զօպօքընի Հայաստանաց եկեղեցւոյ զաւակներէն որ բարեհաճին իրենց ներկայութեամբը կարգադրել ամեն ինչ:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԲՈՂՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԷՆ

Կը խնդրէինք որ բարեհաճին իրենց հաշիւները լրացնել, տարեկան կամ վեցամսեայ բաժանորդ նշանակուելով. իսկ այն բաժանորդները, որոնք երկարատեանէ ի վեր պապտիկ ունին մեզ, գէթ թող պարտաճանաչ գտնուէին «Չայն Հայրենեաց» տարեկան բաժանորդագիրը շարունակելով, հակառակ պարագային պիտի ստիպուինք դադարեցնել իրենց թերթը շարունակելով:

ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Չայն Հայրենեացի տարեկան շրջանը կը սկսի 1899 Սեպտ. 1-ին և 1900 Սեպտ. 1-ը: Վեցամսեայ 99 Սեպտեմբերէ 1900 փետրվար. 1-ը. վեցամսեայ 1900 փետրվարէ Սեպտեմբեր:

Բաժանորդագրութեան շրջանը կը ընդունինք այս հաշուով, և ոչ թէ մէկ թուէ միւս թիւը հաշուելով:

Բաժանորդագիրն է տարեկան \$1.50, վեցամսեայ 85 սենթ:

Ստորի պատուական պըղղուրը և ծեծածը փաւընտը 3 սենթ, 25 փաւընտ կամ աւելի գնողներուն համար 2 1/2 սենթի, Հայկական պանիրին փաւընտը 13, իսկ մեծաքանակ գնողին համար 11 սենթի: Թիթապտղին փաւընտը 10 շատ գնողներուն համար 9 սենթի, Թիթապտղի պատուական իւղին Կէլընը \$1.40 ի կը ծախենք:

Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին:

Ուստի պատուական պըղղուրը և ծեծածը փաւընտը 3 սենթ, 25 փաւընտ կամ աւելի գնողներուն համար 2 1/2 սենթի, Հայկական պանիրին փաւընտը 13, իսկ մեծաքանակ գնողին համար 11 սենթի: Թիթապտղին փաւընտը 10 շատ գնողներուն համար 9 սենթի, Թիթապտղի պատուական իւղին Կէլընը \$1.40 ի կը ծախենք:

Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին:

Մեր բազմաթիւ յաճախորդները ինքնին կը վկայեն թէ որքան գոհացուցիչ պայմաններու մէջ կը գտնուի ճաշարանս. անոր մասերը, խոհարարը վարպետ, գործածուած նիւթերը պատուական, կերակուրները բազմապիսի, համեղ և գրեւորամարս են:

Շաբաթական ճաշագիրներն են՝ \$ 1.85 առաւօտները միայն սուրճ, հաց և կարագ առնողներուն համար, \$ 2.35 սենեակով. \$ 2.10 նախաճաշին հաստատուն կերակուր առնողներուն, \$ 2.60 սենեակով միայն:

Փորձեցէք և շատ գոհ պիտի մնաք: Մ. Տամպուրանեան 1-3

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

Ամէն անոնք, որ կուզեն ազգային հին ու նոր կեանքին և յեղափոխական անցեալ ու ներկայ ուղղութիւններուն տեղեակ ըլլալ, անոնք որ կուզեն Հայկական գեղեցկագոյն գրքերէն արտադրուած հաստից գրութիւններ և շահեկան երգիծարանութիւններ կարդալ՝ ՆՈՐ ԿԵԱՆՔ կարդալու են:

Տարեկան բաժանորդագիրն է 2 տոլար. վեցամսեայ՝ 1 տոլար: Նոր Կեանքի նիւ Եորքի գործակալն է Պրն. Անտոն Թագուրեան և հասցէն՝ 343 Իսթ 34րդ փողոց: Նոր Կեանքի բաժանորդներուն «Մարտ» ձրի կը շարունակուի. Խմբագրութեան հասցէն է,

L. FRANK
32 CHESTERTON ROAD,
LONDON W ENGLAND.

ՄԵՐՈՎ ԿԱՂԱՆՃԵԱՆ

231 Իսթ 28րդ փողոց նպարավաճառի խանութի մէջ կը ծախուի ի միջի այլոց իւրաքանչիւր փաւընտը շաւիչ 5սթ., սուրճ 5, մաքարոնի 5, դեղին թիւ շէշրիէ 8, գէյթի 10, օթմիլ 2 սենթի, սուսարի 5 փաւընտը 27 և 1 փաւընտը 8 սենթի և քէնով սոմաթիսը 7 սենթի, պատուական ապրանք կը պահեմ, աժան կը ծախեմ, մեծ քանակութիւնով գնողներուն կարեւոր զեղչ ընեմ:

ՊՂՂՈՒՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ

Այս նոր ընկերութիւնը կ'արտադրէ շատ լաւ և աժան պղղուր և ծեծած:

Մեծաքանակ գնողաց համար գիրն է 2 1/2 սենթ փաւընտը: Մանրամասն տեղեկութիւն ուզողներն պէտք է գրին հետեւեալ հասցէին:

NEW YORK
BULGOOR MANUFACTURING CO.
226 TO 232 Clinton St. Hoboken n. J.

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
Ս, Տամպուրանեան
509 2րդ Ալիւի . 28 և 29րդ փողոցի մէջ

Մենք կը ծախենք արեւելեան և արեւմտեան ամէն կարգի նպարեղէններ. թարմ բանջարեղէն, պտուղ և սուրճայ թարմ միո:

Ուստի պատուական պըղղուրը և ծեծածը փաւընտը 3 սենթ, 25 փաւընտ կամ աւելի գնողներուն համար 2 1/2 սենթի, Հայկական պանիրին փաւընտը 13, իսկ մեծաքանակ գնողին համար 11 սենթի: Թիթապտղին փաւընտը 10 շատ գնողներուն համար 9 սենթի, Թիթապտղի պատուական իւղին Կէլընը \$1.40 ի կը ծախենք:

Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին:

Պերլինի համայնաբանէն վկայեալ՝ Տըթր. Էֆիլ պատարաստ է ամենաթոշարին մասնաւորապէս զազանի կոչուած արտերբուտիւն:

Կատարելապէս չը բուժուող հիւանդին դրամը ետ կը տրուի: Շատ մը հայեր մեծ գոհացում գտեր են իրմէ: Հայոց համար վճարները շատ չափաւոր են: Օֆիսը 503 5րդ Ալիւի 42րդ փողոցի անկիւնէն է: Առաւօտեան ժամը 9էն իրիկուան 5ը. իսկ կիրակիները՝ 9էն 12օֆիսը կը գտնուի:

The Equitable Life Ins. Society of the U. S

«Էքուիթալ»


Աշխարհի Հզօրագոյն և Լաւագոյն Կենաց ապահովագրական Ընկերութիւնը:

ամեն հասակի և վիճակի տէր անձանց համար ապահովագրելու կրտսայ ի դէպս մահու կամ 15—20—25 տարիէն վճարելի՛ գէթ ուզուի:

Օտար երկիրներէ կամ ներսի նահանգներէ փոխադրող կրնան դիւրաւ թղթակցութեամբ ինքզինքնին ապահովագրել տալ:

Հրդեհի դէմ ևս կապահովագրեմ:

(Գործակալ)
ԿՐԱՆԵՏ ՊԻՒՐԻՆԻՆԻ
164 E. 27th St. New York



Դ Ե Ր Զ Ա Կ
ՅԱԿՈՒ ՈՒՉՈՒՆԵԱՆ
159 Իսթ, 27րդ փողոց

Թէ պատուական և թէ աժան հանգերը կը փնտռէք, անանկ չէ՞. — մենք սուղ կը շխնենք — բայց չէ՞ մեր գործին որքան աժան ըլլալը ատեն մը գործածուելէն ետքը միայն կրնաք հասկնալ. անոնք որ իրենց գրաւած անարժէք սարանքի տուած ըլլալու զղջումը շնն ուզեր ունենալ և նոյն ատեն լաւ ճաշակ մը ունին, անգամ մը մեզի հանդիպելուն համար ուրախ պիտի ըլլան: Մենք զուտ անգլիական ապրանք միայն կը գործածենք:

Ուրիշ տեղերու վրայ հարկերին քատուած աժան պատարաստի հանգերը ալ կը ծախենք. նաև կը նորոգենք, կը մաքրենք, կը ներկենք և կարդուկենք:

Գիտնալու համար թէ, մենք մեր հայրենակիցներէն, ուրիշ տեղերէ շատ զգալի կերպով վար գին կանոններ, անգամ մը մեզի այցելելը պիտի բաւէ:

ՃԱՇԱՐԱՆ
805 Մէյն փողոց Փաթրոնը

Պատիւ ունինք ծանուցանելու թէ ստանուէն առնուած ճաշարան նախանձակի գիրքի մը մէջ դրուելու համար ամէն կարելի միջոց պիտի գործածենք, անանկ որ մեր յաճախորդները գոհ ըլլան. մեր խոհարարին կրկար մանայ փորձառութիւնը ինքնին երաշխաւորութենէ թէ կը բակուրները համեղ և մաքուր պիտի մլան: Գործ մը միայն ձեզ գոհ պիտի ընէ:

Թ. Ա. ԱՆՏՈՆԵԱՆ

Ա Չ Դ

42րդ փողոցի Ս. Բարթողիմէոս եկեղեցւոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան կանոնադ տեղափոխուած և աւելի հաստատ հիմքեր վրայ վերականգնուած ըլլալով՝ իւր մարգութիւնները կը շարունակէ ի թիւ 498 3րդ Ալիւի 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրիկուներ ժամը 8էն 10ը: